ք. Երևան, Ս. Դավթի 87ա **<<25>> օգոստոս 2021թ**

ԷՄԻՆ ՈՍԿԱՆՅԱՆ, ՀՎՀՀ՝ 57245761,
Հասցե՝ Շիրակ, Գյումրի, Մարատի, 10Ա

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Դուք 25.08.2021 թվականի դրությամբ ունեք 195.500 դրամ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորություն: Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորությունը գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման
և պարտավորությունների կատարման ապահովման
բաժնի գլխավոր մասնագետ Թ. Միքայելյան

Digitally signed by MIKAYELYAN TEHMINE
6310770563
Date: 2021.08.25 12:12:38 AMST

Հեռ. 011-54-91-91 /ներքին՝ 91-29/